**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 21-ը դեկտեմբերի 2017թ.
ժամը $11^{30}$

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների** կողմից առաջարկվող ապրանքների որակավորման փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով նախատեսված բինտ ստերիլ ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93-ի պահանջներին, համաձայն որի բինտերը պետք է լինեն բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОСТ-9412-ի: Ընդ որում ըստ ГОСТ-9412-ի՝ բինտերի կտրման համար նախատեսված թանզիֆի խտությունը պետք է լինի 36գ/քառ. մետր, թույլատրելի շեղումը՝ 5%, այնինչ **ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի** առաջարկվող բինտերի խտությունը նշվում է 28+/- 2գ/քառ. մետր, ինչը չի համապատասխանում հրավեի պահանջներին:

Հրավերով նախատեսված ГОСТ-երի բացվածքները կցվում են:

- մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1) ներառված չեն ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի **«Ծանոթություն»** մասով սահմանված հետևյալ դրույթները.
- Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:
- Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի /ապրանքատեսակների խմբաքանակի/ համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:
- Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

Ընդունել ի գիտություն՝ **«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատումն իրականացնելիս, գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել պատասխանատու ստորաբաժանման կողմից 22.12.2017թ. 19/2806 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը:

- **«Էսզեթ Ֆրամա» ՍՊԸ-ի** կողմից 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝ մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում բացակայում է **«ստերիլ»** բառը, ինչը հստակ սահմանված է ընթացակարգի հրավերով:
- մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1) ներառված չեն ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի **«Ծանոթություն»** մասով սահմանված հետևյալ դրույթները.

Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:

- Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի /ապրանքատեսակների խմբաքանակի/ համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:
- Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

- **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված Հավելված N6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չեն համապատասխանում ընթացակարգի հավերի 8.19 կետով սահմանված պահանջին. նշված հայտարարությունները հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- մասնակցի կողմից 4-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագրում սահմանված է 2 ստանդար՝ **(ту 9393-001-51955108-2002 կամ 9393-021-00320455-2010)** անհրաժեշտ է հստակեցնել և սահմանել դրանցից մեկը:

- մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1) ներառված չեն ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի **«Ծանոթություն»** մասով սահմանված հետևյալ դրույթները.

Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:

- Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի /ապրանքատեսակների խմբաքանակի/ համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:

- Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

- **Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանի** կողմից ներկայացված Հավելված N 6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում) էլեկտրոնային եղանակով ստորագրված են Գոռ Հարությունյանի կողմից, ով ըստ ներկայացված փաստաթղթերի չունի նման լիազորություն: Որպեսզի էլեկտրոնային ստորագրության առկայությունը հանձնաժողովի կողմից գնահատվի բավարար, անհրաժեշտ է ներկայացնել Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանի կողմից Գոռ Հարությունյանի նշված իրավասությունը հաստատող լիազորագիր:

- որպես մասնագիտական փորձառության առկայության հավաստում ներկայացված N ԲՊՁԲ-10/15 ծածկագրով պայմանագրի «1» և «2.2» կետերի համաձայն պայմանագրով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագիրը և գնման ժամանակացույցը նախատեսված են դրան կից N 1 և 2 հավելվածներով, որոնք պայմանագրին կից չեն ներկայացվել, բացի այդ, պայմանագրի «4.1» և «9.1» կետերի համաձայն պայմանագիրը կնքելուց համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել, իսկ դրանց նախատեսման դեպքում պետք է պայմանագրին կից կնքվեր համապատասխան համաձայնագիր, որը ևս չի ներկայացվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը՝ 11:35-ին կայացրած նիստում որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Հ. Ավետիսյան |
| Գնահատող | Ն. Հարությունյան |
| Գնահատող | Ս. Նիկոյան |
| Գնահատող | Կ. Բրուտյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Մաղաքյան |

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28-ը դեկտեմբերի 2017թ.
ժամը 11[30]

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**28.12.2017թ.** կայացած նիստում հանձնաժողովի անդամներին ներկայացվեցին մասնակիցների կողմից որպես շտկում ուղարկված փաստաթղթերը և հանձնաժողովը որոշեց դրանց քննարկման նպատակով նիստը շարունակել **12.01.18թ.-ին:**

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

1.1 **12.01.18թ.-ին** ժամը 11:00-ին կայացած նիստում փաստաթղթերի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ որոշեց **Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանի, Էսզեթ Ֆարմա և Նատալի ֆարմ ՍՊԸ-ների** կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատել բավարար:

1.2 Քննարկելով «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը՝ հանձնաժողովն արձանագրեց, որ ՙասնակցի կողմից չի շտկվել **26.12.2017թ.** ծանուցմամբ պահանջված հետևյալ անհամապատասխանությունը.

«Ընթացակարգի հրավերի 3-րդ չափաբաժնով նախատեսված բինտ ստերիլ ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանված էր, որ բինտերը պետք է համապատասխանեն ГОСТ 1172-93-ի պահանջներին, համաձայն որի բինտերը պետք է լինեին բժշկական սպիտակեցված թանզիֆից՝ համաձայն ГОСТ-9412-ի: Ընդ որում, ըստ ГОСТ-9412-ի՝ բինտերի կտրման համար նախատեսված թանզիֆի խտությունը պետք է լիներ 36գ/քառ. մետր, թույլատրելի շեղումը՝ 5%, այնինչ **«ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի** կողմից առաջարկվող բինտերի խտությունը նշվում է 28+/- 2գ/քառ. մետր, ինչը չէր համապատասխանում հրավերի պահանջներին»:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց «ԼԵՅԿՈԱԼԵՔՍ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

Հանձնաժողովը որոշեց վերջինիս տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.3 **«Լեյկոալեքս» ՍՊԸ-ի** մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **«Սիտի սայնս»** ՍՊԸ-ին

1.4 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

1.5 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ **«Սիտի սայնս» ՍՊԸ-ին** որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Հ. Ավետիսյան |
| **Գնահատող** | Ն. Հարությունյան |
| **Գնահատող** | Ս. Նիկոլյան |
| **Գնահատող** | Կ. Բրուտյան |
| **Գնումները համակարգող՝** | Ա. Մաղաքյան |

12.01.2018թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 19-ը հունվարի 2018թ.
ժամը $11^{30}$

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔԾԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:
Բացակայում է՝ ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

1.1 **«Լեյկոպլեքս» ՍՊԸ-ի** մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից էր ճանաչել **«Միտի սայնս»** ՍՊԸ-ն:

1.2 **12.01.2018թ.** Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկվել էր ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, սակայն սահմանված ժամկետում **«Միտի սայնս» ՍՊԸ-ի** կողմից պահանջվող փաստաթղթերը չներկայացվեցին, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշեց ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով մերժել վերջինիս հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդող տեղ զբաղեցնող մասնակցին՝ **«Նատալի ֆարմ ՍՊԸ» -ին:**

1.2 Հանձնաժողովը որոշեց **«Միտի սայնս» ՍՊԸ-ի** տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.3 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և «Նատալի ֆարմ ՍՊԸ» -ին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:**

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Գնահատող(ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Գնահատող Ն. Հարությունյան

Գնահատող Ս. Նիկոյան

Գնումները համակարգող՝ Ա. Մաղաքյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 09 -ը փետրվարի 2018թ.

ժամը $11^{00}$

Ընդունել ի գիտություն, որ **«Լեյկոպլեքս» ՍՊԸ-ի** և **«Սիտի սայնս»** ՍՊԸ-ների կողմից սույն ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքները ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 06.02.18թ ԳԲԽ-ԱՄ-2018/08 որոշումամբ մերժվել են:

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

1. Մասնակիցերի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

1.1 **«Լեյկոպլեքս» ՍՊԸ-ի** և **«Սիտի սայնս»** ՍՊԸ-ների մերժման արդյունքում 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից** ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեցին բավարար՝ գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:***

1.2 **09.02.2018թ.**հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացված որակավորման փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Հ. Մելիքյան |
| Գնահատող | Հ. Ավետիսյան |
| Գնահատող | Ն. Հարությունյան |
| Գնահատող | Ս. Նիկոյան |
| Գնահատող | Կ. Բրուտյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Մաղաքյան |

09.02.2018թ.